

19615

329

U-66

329

Մ-66

27 SEP 2006

6103

15 JAN 2010

ԱՆԿԱԽ ՍՈՑԻԱԼԻՍՏՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹ.

8829

ՄԵՐ ԴԱՒԱՆԱՆՔԸ
ԵՒ ԾՐԱԳԻՐԸ



ԱԼԵԲՍԱՆԴՐԱՊՕԼ
Տպարան Մանոյանի
1919

19615

28 JUN 2013
2

ԱՇԽԱՐՀԱՅԱՅԵԱՅԻ ԵՒ ԳՈՐԾԵՆԱԿԵՐԳ

Մարդկանց գործադուլիւնները պայմանաւորուած են, առաջին՝ դրած նպատակով և երկրորդ՝ գործելակերպով, այսինքն գործունէութեան միջոցներով ու եղանակով: Մակայն թէ նպատակը և թէ գործելակերպը բղխում են ընդհանուր աշխարհայեացքից և կեանքի ըմբռնումից:

Աշխարհայեացքը կարող է լինել կամ գիտականօրէն հիմնաւորուած կամ ինչ-որ պատահական, չըմտածված, քաստական: Կեանքի ըմբռնումը կարող է լինել բէալ՝ հիմնաւորուած իրականութեան ճանաչողութեամբ, և՛ ֆանտաստիկ, երեակայական, հիմնուած ֆանտաստիկ տենչանքների վրայ:

Ճիշտ գիտութիւնները լիակատար հնարաւորութիւն են տալիս պարզ, հասկացողութիւն կազմել ֆիզիկական աշխարհի մասին, սակայն գիտական մեթոդը քայլ առ քայլ նուաճում է նաև հոգեկան աշխարհը: Իսկ այդ երկու աշխարհները՝ ֆիզիկական և հոգեկան կազմում են միջավայրը, որի մէջ ապրում է, զարգանում և գործում թէ՛ անհատը և թէ՛ հասարակութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

28625

329.14
5-65

3

1006
2829

Հետևաբար, հիմք չունենք կասկածելու որ գիտականօրէն կարելի է վերլուծել և հասարակական երևոյթները: Ճիշտ է, հասարակական կեանքը և ազգերի գոյութեան բաղմազան պայմանները այնքան բարդ են և զանազանակերպ, որ նրանց գիտական տարրալուծումը չափազանց դժուար է. այս է պատճառը, որ դեռ մանուկ հասարակագիտութեան կամ սոցիոլոգիայի մէջ շատ բան դեռ ևս ենթադրական է և ոչ լիօրէն պարզարանուած: Բայց դժբախտաբար այդ հանգամանքը չի խանգարում շատ մակերեսային կամ ցնորամիտ «գործիչներին» գիտական ենթադրութիւնները և ժամանակաւոր օժանդակ կառուցուածքները համարել միանգամայն վճռուած ու աներկրայելի ճշմարտութիւններ և այդ ժամանակաւոր կառուցուածքների վրա, առողջ գատողութեան հակառակ, ոչ միայն յօգուենգներ մշակել այլև կազմակերպութիւններ ստեղծել, իրական պայմանների հակառակ, բռնադքօսիկ կերպով, կոպիտ ոյժի վրա հիմնված հրամաններով ձգտել իրադործել ցնորքները, ֆիկցիաները: Մարդկային ցեղի այդ անսակ բարեկործանողը՝ իրանց փորձերով կամ էքսպերիմենտներով ոչ միայն չեն նպաստում յառաջադիմու-

2829

թեան, այլ յաճախ միանգամայն հակառակ հե-
տևանքների են հասնում, կասեցնում են զար-
գացման բնական ընթացքը և տանում են դէպի
յետադիմութիւն, ըեզրեօս, այլասերում և կո-
րուստ հէնց այն հասարակութիւնները և ժողո-
վուրդները, որ իրենց փորձերի կամ էքսպերի-
մենտների առարկայ էին դարձրել ..

Չնայած հասարակական երևոյթների բար-
դութեան և բազմազանութեան՝ այնուամենայ-
նիւ դրանց օրինաչափութիւնը ակնյայտնի է, և
հասարակութեան զարգացման հիմնական օրէնք-
ները բաւական պարզաբունուած են:

Տիեզերքի առաջին և համատարած օրէնքը՝
աստիճանական փոփոխութիւնն է կամ էվոլյու-
ցիան: Նրա զօղափարը յայտնի էր դեռ հին յու-
նական փիլիսոփաներին. ըստ Հերակլիտէսի՝
ամէն ինչ հոսում է և փոփոխուում:

Աւելի մօտ ժամանակներում, ինչ-
պէս Դարւինը բնագիտական փորձերով գտաւ
օրգանական էակների զարգացման օրէնքները
և ապացուցեց, որ այդ օրէնքները գտնուում են
նիւթական գոյութեան՝ միջավայրի՝ պայմաննե-
րի մէջ, այնպէս էլ է. Մարքսը պարզեց, որ
հասարակութիւնների պատմական զարգացման

օրէնքները պէտք է որոնել մարդկային համա-
խմբումների նիւթական պայմանների մէջ, գո-
յութեան նիւթական միջավայրի մէջ: Այդ նիւ-
թական պայմանները, թէ մէկ և թէ միւս դէպ-
քում, աստիճանաբար փոփոխուում են, ուստի
ինչպէս օրգանական էակների ձևերը, այնպէս և
հասարակութեան կեանքը զարգանում են փոխ-
ուելով աստիճանաբար, էվոլյուցիօն ճամբով:
Յանկարծակի փոփոխութիւնը կամ յեղափոխու-
թիւնը, ըէվոլյուցիան, լոկ էվոլյուցիայի որոշ
մի աստիճանն է կամ ստադիան: Ինչպէս ծնրն-
դաբերութիւնը նախօրօք աստիճանաբար զար-
գացած սաղմի հասունութեան հետևանք է,
այնպէս և յեղափոխութիւնը. իսկ ժամանակից
առաջ, բռնի ոյժով արագացրած ծննդաբերու-
թեան հետևանքը՝ վիժումն է. ապրելու անըն-
դունակ մի պտուղ: Ի դուր չէր Բէկլին ասում,
էվոլյուցիան կատարվեց և յեղափոխութիւնը չի
յապաղի վրայ հասնել: Առանց հասունացած
էվոլյուցիայի չըկայ բնականոն յեղափոխութիւն,
այլ տեղի ունի լոկ բռնադատուած վիժմունք,
այլանդակ խառնակութիւն, հասարակական հա-
սունացած շարժումներն են միայն աջողու-
թիւն ունենում: Եւ ուսանելի է, որ գիտակից

միջավայրում, քաղաքական գեմեկրատիկ ազատութիւններ ունեցող երկրներում, բանադրօտիկ դեկրետներով, հրամաններով, չի աջողում չհաստենացած «յեզափոխական» օրէնքներ մքտցնել կեանքի մէջ: Այդպէս, օրինակ, Շվեյցարիայում ժողովրդական րեֆերենդումով (համաժողովրդական ձայնատութեամբ և հաստատութեամբ) մի քանի անգամ մերժուել են օրէնքի նախագծեր՝ առաջարկած և անցկացրած օրէնսդրական հաստատութիւններում սոցիալ դեմոկրատների ջանքերով, որովհետև միջավայրը, ժողովուրդը, ունենալով գիտակցութիւն և քաղաքականօրէն լինելով զարգացած՝ կարողանում է քննադատօրէն և ինքնուրոյն կերպով վերաբերուել գէպի հասարակական հարցերը, հաստենացածը ջոկել խակից և օրինելու պայմանների անհամապատասխան, մողային կամ նեղ հուսակցական ներմուծութիւններից:

Երկրորդ արեգեբրական օրէնքը, որ լրկում է էպօլիցիօն օրէնքից, գա երեոյթների պատճառների կամ գործոնների (փակտօրներ) ըագմատնսակութիւնն է:

Հասարակական երեոյթները արդիւնք են բազմաթիւ փոփոխական ֆակտօրների: Այդպի-

սով ինքը կեանքը համազումար է այնպիսի առեւտրների, որոնք ժամանակի և տարածութեան մէջ փոփոխական են: Հետեաբար, կեանքը ինքը արդիւնք է, Ֆունկցիա է, փոփոխական մեծութիւնների, ուրեմն՝ չի կարող ինքը ևս մնալ անփափօխ: Այդ փոփոխական պայմանների կամ մեծութիւնների կոմբինացիան անսաման զանազանակերպ է և համարեա նոյնութեամբ երբէք չի կրկնում. հետեաբար, այդ փոփոխութիւնների Ֆունկցիան՝ ինքը կեանքը՝ իւրաքանչիւր դէպքում պէտք է լինի ինքնատիպ, տարբեր տեսակի: Այստեղից պարզ է, որ շարլօն, ընդհանուր բոլոր դէպքերի համար չափանիշներ հասարակական-քաղաքական կեանքում չեն կարող գոյութիւն ունենալ, և հարկ կայ ծանօթանալ իւրաքանչիւր ինքնատիպ երեոյթի հետ առանձին բազմակողմանի ուսումնասիրութեամբ:

Հասարակական զարգացման երեոյթների վրայ ազդող բազմազան պատճառների կամ ֆակտօրների մէջ տիրապետող նշանակութիւնը պատկանում է անտեսական ֆակտօրին, այսինքն՝ արդիւնքների արտադրութեան և փոխանակութեան փոփոխուող ձեւին: Անհրաժեշտու-

թեան զօրութեամբ և որոշ կանոնաւորութեամբ հասարակութեան մէջ կատարուում են պրօցէսներ, որոնք փոփոխուող են և այլայլելի, հետեւաբար հասարակական կեանքը՝ իբրև այդ փոփոխուող պրօցեսների կօմպլեկս՝ չի կարող ճանաչուել իբրև մի քարացած, անշարժ, վախճանականօրէն ձևակերպված բան: Պէտք է ուրեմն շերակլիտէսի խօսքերը կրկնել. ամեն ինչ հոսում է և փոփոխուում:

Ըստ Հէգէլի դիալեկտիկական մեթոդի, երբ մեր մտքում ծագում է առանձին հասկացողութիւն՝ իբրև դրական (թեզիս), նրա կողքին երևան է գալիս այդ դրական հասկացողութեան ժխտումը կամ բացասումը (անտիթեզիս). և այդ երկու ներհակ հասկացողութիւնների բալխումից է առաջ գալիս նոր, աւելի բարձր, աւելի մօտ ճշմարտութեան ու բովանդակալի երրորդ դրութիւն մեր մտքում՝ համադրութիւն (սինթեզիս): Այդ նոր, ճշմարիտ հասկացողութեան մէջ սկսում է նոյն պրօցեսը և ստացւում է աւելի կատարեալ նոր հասկացողութիւն և այլն և այլն: Այդ նոյն դիալեկտիկական պրօցեսսը տիեզերական զարգացման էութիւնն է: Պարզ է, որ այդ ևս էվօլյուցիայի, առաջադի-

մութեան մի ուղի է, որ ոլորապառայ գիզգագներով առաջ է ընթանում: Հներբ ասում էին՝ natura non facit saltus (բնութիւնը թոխք չի անում): Ուրեմն անընդհատ փոփոխութիւնը, անընդհատ զարգացումը ոչ միայն մտքի, այլ և երևոյթների հիմնական օրէնքն է. հասարակական փոփոխութիւններն էլ երևոյթներ են, ուրեմն անընդհատ փոփոխութեան են ենթակայ: Օրինակի համար, վերցնենք տնտեսական մի դրութիւն որոշ ժամանակում. գիցուք՝ կապիտալիզմը, որ ինքը պատմականօրէն նախորդ մի շարք գրական և դրանց ժխտող երևոյթների սինթեզիս է. մենք պէտք է հետևցնենք, որ նա ևս անընդհատ առաջ գնալով վերև նկարագրած ոլորապառայ թեքումներով պէտք է գնայ դէպի իր բացասումը՝ սոցիալիզմը: Ուրեմն, սոցիալիզմը կապիտալիզմի բացասութեամբ կամ մասնաւոր սեփականութեան վերացումով և վարձու աշխատանքի իրաւունքի յաղթական անձումով ստացուելիք սինթեզիսն է: Ինքը այդ նոր համադրութիւնը կամ սինթեզիսը իր մէջ պարունակելու է սաղմային դրութեան մէջ դարձեալ նոր ժխտում, և այդպէս անվերջ, մինչև որ կատարելապէս մարդկութիւնը հասնի

այն կացութեան որ պիտի համարուի համա-
մարդկային երջանկութիւնը ապահովող մի
երկրային դրախտ: Յայնկոյս սոցիալիզմի շա-
րունակվող էվոլիւցիան դժուար է ճշտօրէն նա-
խագուշակել. գուցէ դա լինելու է անարխիզմ.
գիտակից կատարելատիպ ու անկախ անհատների
երջանիկ համակենցադ՝ առանց իշխանաւորների
գաւազանի ստիպողութեան, այլ սիրոյ արեգակի
տակ. . Ո՞վ է իմանում... Միայն այն գիտենք, որ
այդ դրութիւնը չի ստեղծուելու մի խումբ մարդ-
կանց բռնի ոյժով կամ յենուած բռունցքի զիկ-
տատուրայով, այլ սոցիալական անընդհատ, աս-
տիճանական, հասունացած բարեփոխումների ճա-
նապարհով. պայքար մարդավայել և ոչ գազա-
նային գործելակերպ: Եւ մենք տեսնում ենք,
որ քաղաքական ազատութիւնների մթնոլորտում
ապրող ժողովուրդների սոցիալական կեանքը
(Մնգլիա, Նոր Զելանդիա և այլն) բարեփոխ-
ւում է անընդհատօրէն, պարլամենտական րե-
ֆորմիզմով դէպի իսկական Դեմօկրատիա:

Նա է քաղաքակրթական և ոչ բարբարոսա-
կան ճանապարհը մօտենալու համամարդկային
իդէալին:

Սակայն անտեսական ֆակտորների գերիշ-

խնդ նշանակութիւնը չի ժրխում միւս ֆակ-
տորների ազդեցութիւնը հասարակական գար-
գացման երևոյթիւնների վրայ թէկուզ այդ վեր-
ջին ֆակտորները համարու էին «վերնաշէնքեր»,
«հետևանքներ» անտեսական յարաբերութիւն-
ների: Որովհետև անկասկած է, որ այդ «վեր-
նաշէնքերն» և «հետևանքները» ժամանակի ըն-
թացքում, կորցնելով իրանց ծագման հետքերը,
իրենք անկասօրէն գառնում են նոր պատճառ-
ներ և գործօններ հասարակական երևոյթիւնների:
Օրինակ, գուցէ «Կրօնական զգացմունքը», կամ
«հայրենասիրութիւնը», «պատուի զգացմունքը»
և այլն իրենց ծագմամբ և բացատրվեն իբրև
անտեսական յարաբերութիւնների «վերնաշէն-
քեր» և «հետևանքներ», սակայն նրանք ներ-
կայումս գոյութիւն ունեն իբրև ուրոյն հոգե-
բանական ֆակտորներ:

Այդպէս անա բոլոր վերև ասածներից տես-
նում ենք որ այնքան էլ դիւրին չէ պարզաբա-
նել հասարակական երևոյթիւնների կոնֆիւնները:
Պարզ է որ նախքան քաղաքացիական պիտանք կայա-
ցնելը պէտք է առանձնապատուկ պայմանների
մանրագննիսն բնութիւն, ուսումնասիրութիւն:

Առնասարակ հարցերի լուծման գիտական

մեթօզը չէ կարող հաշտուել քարացած դօզմաների հետ, ուստի միանգամայն իրաւացի է կառուցկին ասելով, որ ռայն եզրակացութիւնները, որոնց յանգել են Մարքան ու Էնգելսը, գիտութեան վերջին խօսքը չեն ներկայացնում. Հասարակութիւնը գտնուում է անընդհատ զարգացման վիճակի մէջ և յայտնագործւում են ոչ միայն նոր Ֆակտեր, այլ և դիտողութեան և հետախուզութեան նոր մեթօդներ: Մարքսի և Էնգելսի ասածից այս կամ այն բանը դառել է անհիմն, այս կամ այն բանը պահանջում է մրացնել սահմանափակում, այս կամ այն կէտը պէտք է լրացնել և այլն»: Նոյնը և դարվինականութեան մէջ. ուսման հիմքը մնում է, իսկ մանրամասնութիւնները փոփոխւում են, լրացւում: Որ միայն տնտեսական ֆակտորով չի կարելի բաւականանալ, այդ երևում է Էնգելսի հետևեալ խօսքերից. «Չէ կարելի այս կամ այն էպօխայի պատմութիւնը վերածել ազգերբայական մի անյայտով հաւասարութեան լուծման»: Ի հարկէ գռեհիկ և թեթևասլիկ գործիչները և մակերեսային մտածողները այլ կերպ են մտածում և վարվում...

Դեռ Սպինոզա փիլիսոփան գիտնականօրէն

հիմնաւորեց այն ուսուցումը, որ մարդու մէջ գործունէութիւնը հանդիսանում է իբրև հետեւանք անհրաժեշտ և որոշ օրէնքների, և միայն այդ օրէնքների անգիտութիւնն է պատճառ, որ հաւատում են թէ կայ մարդկային կեանքի ազատութիւն. նա սպացուցեց, որ մարդն ևս, ինչպէս բոլոր շրջապատը, ենթակայ է որոշ օրէնքների. և մարդու ուղեղը կառավարում են նոյնանման օրէնքներ, որոնցից, օրինակ, կախում ունի մարմնի ընկնումը: Հետևաբար, անհատը չէ կարող ճանաչուել իբրև բացարձակօրէն ազատ գործոն, որովհետև նրա կամքից չէ կախւած ան հանգամանքների համագումարը, որը իրմով որոշում է և այդ կամքի շարժումները: Սակայն, միւս կողմից չպէտք է ուրանալ որ անհատը ինքը լինելով արգիւնք միջավայրի, այնուամենայնիւ, իր անհատական առանձնայատկութիւններով ևս կարող է որոշ գունաւորում տալ հասարակական երևոյթների այս կամ այն բնոյթին, նրա անհատական ազդեցութիւնը պէտք է ճանաչուի այդ դէպքում իբրև ածանցող, երկրորդական Ֆակտոր: Այդպէս, օրինակ, մի Բիսմարկ իր քաղաքական ծրագրով օրինկտիւ պայմանների ծնունդ էր, սակայն իր

անհատականութեամբ հասարակական – քաղաքական անցքերին» տուաւ որոշ գունաորում և ուղղութիւն.

Գիտնականօրէն վերլուծել որոշ տեղի, որոշ ժամանակի և զարգացման աստիճանի վիճակը, իրականութեան մէջ եղած հանգամանքների ամբողջութիւնը, կոմպլեկսը՝ այդ և անհրաժեշտ, նախքան գործնական քայլեր անելը՝ ծրագիրներ կազմելը: Միայն այդ պայմաններում անհատի մասնակցութիւնը կարող է օգնել բնականոն զարգացման, նպատակ առաջադիմութեան: Հակառակ դէպքում՝ կամ անհատի շանքերը անպտուղ կը լինեն, կամ նա իր անտեղի և ցնորական միջամտութեամբ միայն վրաս կարող է պատճառել: «Աւելի վատ բան չկայ, քան մի ծրագիր, որ հակասում է իրականութեան», ասում է Կաուցկին: Իծրախտաբար մեր ամեն գաւանանքի այնպիսիականների ծրագիրները և գործելակերպերը հակասում են հէնց իրականութեան...

Ահա ինչու մեր անկախ սոցիալիստների գործելակերպը հիմնւած պէտք է լինի իրականութեան լուրջ ուսումնասիրութեան վրայ: Շարլօններով և անալոզիաներով մենք չենք զեկա-

վարուելու: Կենքի առանձնայատուկ պայմանների վերլուծումը, գիտական մեթոդով իրականութեան ուսումնասիրութիւնը պէտք է լինեն հիմք մեր ծրագրի: Բեվօլիւցիան հասունացած էվօլիւցիայի հետևանք պէտք է լինի և ոչ իմաստակ սնափառների սուրինաւոր բռնութեան արգասիք: Միայն էվօլիւցիայի ճանապարհն է տանում դէպ սոցիալիզմի յաղթանակը:

Ի Բ Ա Ի Ո Ի Ն Ք Ի Մ Ա Ս Ի Ն

Դեռ հները մարդուն համարում էինք քաղաքական կենդանի, զրանով ցոյց տալով որ հասարակութիւնը այն միջավայրն է, առանց որի մարդը չի կարող ապրել, ինչպէս՝ ձուկը առանց ջրի: Կղզիացած մենաւոր Բորինգոնները լոկ երևակայութեան մէջ գոյութիւն ունեն:

Ապրելով միասին մարդիկ իրար հետ կապուած են բազմատեսակ փոխադարձ յարաբերութիւններով: Մէկի կամքը և շահը ընդհարուում է միւսի կամքին և շահին: Անտանելի խառնաշփոթ զրութիւնը, մշտական կազմ ու կրօնը վերացնելու համար անհրաժեշտութիւնը

ստիպում էր մտածել՝ միջամարդկային յարաբերութիւնները կանոնաւորելու մասին: Այդպէս է ծագում իրաւունքների գաղափարը. իրաւական չափերը կամ օրէնքները այնուհետև առաջադրում են մարդկային վարքի կանոններ: Եւ այդ չափերը կամ նորմաները պարտադիր են դառնում բոլորի համար և անձեռնմխելի, մինչև որ չեն փոխւում հասարակութիւնից որոշուած կարգով: Այդ օրէնքները կամ իրաւական նորմաները պարտադիր են ոչ միայն ստորադրեալների, այլև իշխանութեան համար, որից պահանջւում է ճշտութեամբ կատարել օրէնքով սահմանած իր պարտաւորութիւնները. հետևաբար՝ անհատի կամքից և քմահաճոյքից չէ կախուած օրէնքը: Պետական իշխանութիւնը միայն որոշ օրինաչափերով է կարող ցոյց տալ իւրաքանչիւր անհատին նրա իրաւական տեղը, նրա իրաւունքը ու պարտականութիւնները թէ՛ ղէպ ամբողջ պետական կազմը և թէ՛ ղէպի առանձին անհատները. և միայն օրէնքով պէտք է ստիպել որ անհատը կատարի հանրային՝ պուրլիկ՝ իրաւունքի պահանջները: Սակայն հասարակական կեանքում կան շատ խնդիրներ, որոնք մասնաւոր, անհատական կամ խմբային նշանա-

կութիւն ունեն. թողնելով այդ ղէպում առանձին անհատին կամ հաստատութիւններին որոշ նախաձեռնութիւն և ինքնորոշում՝ օրէնքը միմիայն վերահսկում է, որ փոխադարձ համաձայնութիւններով կայացրած գործողութիւնները կատար ածուին՝ համաձայն փոխադարձ պայմանաւորման. դա քաղաքացիական կամ ցիվիլ իրաւունքի սահմաններն է:

Ձինազոչութիւնը, օրինակի համար, հանրային իրաւունքի կատեգորիային է պատկանում, իսկ ամուսնութիւնը և տնտեսական գործունէութիւնը քաղաքացիական կամ ցիվիլ իրաւունքի կատեգորիային:

Գուցէ ոչ մի հասարակական երևոյթիմէջ դասակարգային ուժերի բախումը այնքան ակնյայտնի չէ, որքան իրաւական: Այդ պատճառով թէ՛ կանրային և թէ՛ քաղաքացիական իրաւունքը փոփոխւում են հասարակական զարգացման հետ զուգընթացաբար: Կան շատ օրէնքներ, որոնք տուղ թողնուած էին մասնաւոր համաձայնութեան և նախաձեռնութեան, բայց ժամանակի ընթացքում դառնում են հանրային կամ պետական հոգացողութեան առարկայ: Այդպէս են, օրինակի համար, բանուորների և զորմուսկր-

լի փոխյարաբերութիւնները որոշող նորմաները բանուորական շարժման ուժեղանալով՝ նրա շահերը պաշտպանող օրէնքներ են սահմանուած և այդպիսով սանձահարուած է գործատէրերի կամքի միակողմանի արտայայտութիւնը, և անասական յարաբերութիւնները կանոնաւորող քաղաքացիական կամ ցիվիլ օրէնքները դառնում են հանրային պետական, պուբլիկ իրաւունք:

Հանրային իրաւունքի ձգտումը՝ կենտրոնացնել պետական իշխանութեան ձեռքում միջմարդկային յարաբերութիւնները կանոնաւորող շահագանց շատ կողմեր և գէպքեր, իհարկէ, գտանգում է մարդկային շանձատականութիւնը, ճնշում է նրա նախաձեռնութիւնը և խախտում ազատութիւնը:

Եւ անս մեր առջև ծառանում է պետականութեան և անձատականութեան ներհակ գաղափարների պայքար, թեզիսի և անտիթեզիսի փոխադարձ ժխտում, որից կամաց-կամաց ըստեղծւում է երրորդ, աւելի կատարեալ դրութիւն՝ սինթեզիս, որը պէտք է հաշտեցնի պետականութիւնը անձատականութեան հետ, կենտրոնաձիգ ձգտումները կենտրոնախոյս ձգտումների հետ:

Դեռ մեծ Ֆրանսիական յեղափոխութիւնը,

իսկ նրանից առաջ Անգլիայում և Ամերիկայում, յայտարարեց, որ հաւասարութիւնը, եղբայրութիւնը և ազատութիւնը մարդկային բընական, անձեռնմխելի իրաւունքներն են: Սակայն բաւական չէ արգար լողունգներ արձակել. պէտք է իմանալ և իրական ճանապարհը այդ իղէայններին հասնելու համար, որ ընկած է հասարակական սեւալ ուժերի փոխյարաբերութիւնների թանձր և խոչնդոտներով լի անտառի միջով: Ուղեցոյցը այդ դժուարին ճամբով պէտք է լինի պարզորոշ ու առողջամիտ ծրագիրը, իսկ ոյժը պիտի ներկայացնի կողմակերպուած պահանջը: Քանի որ ոյժն է որոշում իրաւունքը, այլ հնարաւորութիւն նպատակին հասնելու գոյութիւն չունի:

Ի հարկէ հանրային օգտի տեսակէտից պետութիւնը պէտք է որոշ նորմաներով սահմանափակի անձատական ազատութիւնը, սակայն «հանրային քարօրութեան» դադափարն էլ պէտք է ունենայ որոշ սահմաններ, որովհետև անհատի անբռնաբարելի իրաւունքների մէջ եւ կան մարդկային առաջադիմութեան մեծ արժէքներ: Ծի՛ք ներկայ պայմաններում դեռ չենք կարող ոչի՛ կեցցէ՛ բացարձակապէս անկախ անհատա-

կամութիւնը, այդ դեռ չի նշանակում, որ անհաւը պիտի համարուի լոկ մի գործիք, անհողի, անկամ մի միաւոր, հասարակական օրգանիզմի մի շնչին մասնիկ: Հէնց այդ պատճառով անհամար իրաւունք ունի պահանջել պետութիւնից և հասարակութիւնից՝ ճշտօրէն սրտեղ՝ թէ ինչ են իրենից պահանջում և ինչ սահմաններ են դնում նրա ազատութեան շուրջը, որովհետև իրաւական նորմաների անորոշութիւնը բացում է կամայականութիւնները և սանձարձակ բրնձութիւններէ առաջ դժօրքի դռները:

Մարդը դեռ բնգունակ է հաշտուել իր ազատութեան որոշ սահմանափակումների հետ, եթէ դրանք որոշ օրէնքով են սահմանուած, եթէ դրանք պարզորոշ են, սակայն նա չի կարող հաշտուել առանց ստորանալու և մարդկային կերպարանքը կորցնելու, եթէ այդ սահմանափակումները մէկի քմակաճոյքից և անպատասխանատու կամքից է կախուած:

Սասաղանանջ օրինականութիւնը մարդկային զիտակցութեան անյողթելի պահանջն է:

Իժրախտաբար մեր հասարակութեան մէջ դեռ չափազանց աղօտ է իրաւունքի զիտակցութիւնը և բնութեան ու կամայականութեան

դէմ բողոքող սղին:

Չասենք թէ յեղափոխութեան ժամանակ ենք ապրում և հասկանալի են օրինականութեան խախտումները: Ոչ, յեղափոխական գիտակից դեմոկրատիան աւելի ևս խտտապահանջ պէտք է լինի օրինականութեան նկատմամբ, իրաւակարգ հաստատելու վերաբերմամբ, որովհետև այլևս ոչ ոք չի խանդարում նրան մշակել իր պահանջներին համապատասխան նորմաներ:

Ծ Ր Ա Գ Ի Ր

Անկախ սոցիալիստները ձգտում են իրականացնել երկրի վրայ սոցիալիզմը, այսինքն՝ այնպիսի իրաւակարգ, որի օրօք գործարանները, հողը և արդիւնաբերական գործիքները չեն պատկանելու մասնաւոր անձանց և ընկերութիւններին, ինչպէս այժմ, այլ դառնալու են հանրութեան, ժողովրդի սեփականութիւն:

Անկախ սոցիալիստների կուսակցութիւնը կազմակերպուեց Սէքսանդրապօլում 1917 թ. հոկտեմբերի 15-ին, երբ Հանրապետականների Ակումբում գումարուած ինդիանուր ժողովը ըն-

դունեց «Աշխարհայեացք ու գործելակերպ» և «Երբաւունքի մասին» զեկուցումները, որոնք դասն անկախ սոցիալիստներէ հասարակական-քաղաքական դասանանքը:

Աչքի առաջ ունենալով դարերի ընթացքում մարդկութեան կատարած պատմա-տնտեսական զարգացման ամբողջ պրօցեսը, անկախ սոցիալիստները կեանքի օրէկկաիւ պայմաններէ բազմատեսակութեան առաջնակարգ նշանակութիւն են տալիս ժողովրդական կեանքի երևոյթներէ մէջ, միաժամանակ չժխտելով նաև սուրեկաիւ ազգակների որոշ դերը նոյն երևոյթներէ գոնաւորման և ուղղութեան մէջ:

Այդպիսի ազգակներից մէկն էլ հանդիսանում է մտաւորականութիւնը կամ ինտելիգենցիան, որի կազմակերպւած գործունէութիւնը և ղեկավարութիւնը ժողովրդի կեանքում որոշ երբեմն նոյն իսկ կատասարոֆային դեր է խաղում:

Աշխատաւոր ինտելիգենցիան ինքն ուրոյն տեղ բռնելով հասարակական շերտաւորումների մէջ, այնուամենայնիւ չունի բնորոշ դասակարգային դժեր, ուստի աւելի է ընդունակ տարուելու գաղափարներով և առաջնորդուելու ազա-

դասակարգային իդէալներով, քան բացայայտ դասակարգերը: Տարաբարտաբար ինքը ինտելիգենցիան պատահուած է զանազան թշնամական հատուածների և անհաշտ ազանդների, որոնք Լականը գոհում են անկարևոր մանրամասնութիւններին և դրանով մեծապէս մնասում բուն նպատակին՝ ժողովրդի բարօրութեան: Գերիշխանութեան տենչը շատ հոսանքներին ստիպում է դիմելու խուժանավարական, դեմագոգիական, կեղծիքների և անմիա Ֆեախշների երկրպագութեան և այդպիսի գործելակերպը վարկաբեկում է սոցիալիզմը և ինտելիգենցիան ժողովրդի աչքում: Դեկավարելով ազատութեան, արդարութեան և դիտութեան անկաշտ թելադրանքներով և բուն ժողովրդասիրութեամբ, անկախ-սոցիալիստները ձգտում են սոցիալիստական աշխարհայեացք ունեցող ուժերի մէջ համերաշխութիւն և համագործակցութիւն ըստեղծել՝ աւելի քաջոյթեամբ մարդկութեանը նոր Աւետեաց երկիրը հասցնելու համար:

Այս գրքոյկում առաջ բերելով մեր դասանանքի սկզբունքային կէտերը՝ տալիս ենք նաև մեր ըէպ ծրագիրը:

I Անհատական իրատունքը: Բոլոր անհատները առանց սեռի, դաւանանքի և ազգութեան խրաբութեան հաւասար են Դորէնքի առաջ: Կատարեալ ազատութիւն խղճի, դաւանանքի, բանաւոր և տպագրական խօսքի, համախմբումների, գործադուլների, փոխադրութիւնների, ընկերութիւններ կազմելու և զբաղմունքներ ընտրելու: Անձի, բնակարանի և մասնաւոր զբաղրութեան անձեռնմխելիութիւն: Այդ ազատութիւնները խախտողները պէտք է ենթարկուին պատժի, դատարանի վճարի:

II. Պետական կազմը. Հայաստանը դեմօկրատիական (ժամկավարական) հանրապետութիւն է, նրա տարածութեան վրայ սպրոզ իւրաքանչիւր ժողովուրդ ազգային-կուլտուրական ինքնորոշման իրաւունք ունի:

III. Օրէնդրական եղանակութիւնը. Պետական իրենական օրէնքները սահմանում են և փոփոխում միմիայն Սահմանադիր ժողովը՝ կազմւած բնագնացութեամբ, հաւասար, ուղիղ և գաղտնի ձայնատուութեամբ պրօպօրցիօնալ (համաչափ) թուով ընտրւած ներկայացուցիչներէց: Առօրեական, ընթացիք օրէնքների պահանջումը և փոփոխումը պատկանում է պարլամենտին, որ ընտրւում է նոյն, կարգով, ինչպէս և Սահմ. ժող.:

IV. Գործադիր եղանակութիւնը կամ կառավարութիւնը. Վարչապետը կամ մինիստր-նախագահը ընտրւում է Պարլամենտի մեծամասնութիւնէց, պետական վերահսկիչը պարլամենտի ընդդիմադիր փոքրամասնութիւնէց. միւս մինիստրները կուսակցութիւնների փոխադարձ բանակցութեամբ, կառավարութիւնը և առանձին մինիստրները պատասխանատու են պարլամենտի առաջ և պարտաւոր են հարցապնդումներին բացառութիւն տալու: Պատերազմ յայտարարելու, խաղաղութիւն կնքելու և դաշնակցելու իրաւունքը պատկանում է միայն պարլամենտին:

V. Դատարանը պէտք է լինի ընտրւած ազգաբնակիչութիւնէց. դատավարութիւնը ձրի և առանց աւելորդ ձեականութիւնների: Մահուան պատիժը վերացւում է: Աննշան գործերը ըննում են հաշտարար դատաւորները, իսկ աւելի ծանր յանցանքները՝ երդուեալ ներկայացուցիչների մասնակցութեամբ:

VI. Տեղական ինքնավարութեան պէտք է ենթակայ լինեն ոչ միայն տեղական կուլտուրական, կրթական, բժշկա-առողջապահական, շաղորդակցական, տնտեսական գործերը, այլ և

հասարակական ապահովութեան պահպանութիւնը, ուստի միլիցիան և կոմիսարները ընտրուեմ են տեղական ինքնավարութիւններից և ոչ թէ նշանակուեմ ներքին գործերի մինիստրի հայեցողութեամբ:

VII. Պետական զինուած ուժը. Բոլոր ազգաբնակիչութեան համար, 20 տարեկան հասակից սկսած, պարտադիր է՝ ձեռք բերել վարժութեամբ զինւորական գործի մէջ հմտութիւն, որպէսզի հարկ եղած դէպքում հայրենիքի պաշտպանութիւնը դառնայ ամբողջ ժողովրդի պարտականութիւնը: Աստիճանաբար պիտի մշտական գորքը վերածուի կազմակերպւած ժողովրդական ինքնապաշտպանական զնգերի:

VIII. Եկեղեցին պէտք է բոլորովին բաժանուի պետութիւնից և դառնայ հաւատացեալների միջոցներով պահպանուող և կառավարուող հաստատութիւն. հոգևորականութիւնը իրաւունք չունի որևէ մասնակցութիւն ունենալ պարոցական գործերում:

IX. Արթուրիւնը. սկզբնականը պէտք է լինի աշխարհական, ընդհանուր, պարտադիր և ձրի. միջինը և բարձրը, թէ ընդհանուր կրթականը և թէ մասնագիտականը հանրամատչելի և պահ-

պանուին պետութեան ու ինքնավարութիւնների միջոցներով:

X. Ճինանները. Պրոգրեսիւ տուրք եկամուտների, շահի, կայքի և ժառանգութեան վրայ. ցած եկամուտները բոլորովին ազատ են հարկերից: Պետական մոնոպոլիա շաքարի, թէյի, ծխախոտի, լուցկու, սապոնի, նաւթի. մուսիչիպալիզացիա ինքնավարութիւնների ձեռքով կառավարում) բոլոր ձեռնարկութիւնները, որոնք շօշափում են ժողովրդական լայն շերտերի կենսական շահերը. օրին. հացափաճառքը, մտավաճառքը, լուստւորումը, բաղնիքը և այլն: Վերացում կամ թեթևացում մաքսային հարկերի այն տարիկաների վրայ, որոնք անհրաժեշտ են երկրի մէջ գիւղատնտեսութիւնը և արդիւնաբերութիւնը զարգացնելու: Էժան վարկ տեղական ինքնավարութիւններին կուլտուրական ձեռնարկութիւնների համար:

XI. Բանտարական հարց. 8 ժամեայ աշխատանք. անչափահասները մինչև 16 տարեկանը ազատ են աշխատանքից: 16—18 տարեկանների համար 6 ժամ աշխատանք: Յղի կանայք վերջին 4 շաբ. բնթացքում և ծննդաբերութիւնից յետոյ 6 շաբ. բնթացքում ազատ են աշ-

խատանքից, պահպանելով վարձը: Յարմարութիւններ իրենց մանուկներին ծծով կերակրելու:

Պետական ապահովագրութիւն ձերութեան, հիւանդութեան և բանելու ունակութեան պակասելու դէպքերում. բանւորութիւնից ընտրուած զործարանային տեսուչներ և տեսուծիներ: Արգելոււմ է գիշերային աշխատանքը բացառութեամբ այն դէպքերի, երբ այդ անհրաժեշտ է տեխնիկական կարիքներով կամ հասարակական պահանջով: Արգելոււմ է պայմանաւորած ժամերից դուրս աշխատանքը: Կանանց աշխատանք այն դէպքերում, երբ այդ վնասակար է նրանց օրգանիզմի համար արգելոււմ է: Բանւորութեան և զործատէրերի փոխյարաբերութիւնները պէտք է մշակուած լինեն օրէնսդրական կարգով: Հաշարար մարմիններ բանւորների և ձեռնարկողների ներկայացուցիչներից հաւասար չափով ընտրած: Աշխատանքի բոլոր տեղական և եկտրբանւորներին վարձելու համար, կազմուած տեղական ինքնավարութիւններից մասնակցութեամբ բանւորական կազմակերպութիւնների ներկայացուցիչների: Առևարա-արդիւնաբերական ծառայողների և արհեստատուների պաշտպանութիւն օրէնս-

գրական միջոցներով:

XII. Հողային Գարգ. Պարտադիր գրաւում եկեղեցական, վանքապետական, մասնատիրական հողերի և յանձնուած գանձարանի հողերի հետ միասին և սեփականութիւն և գործադրութիւն հանրութեան (նացիօնալիզացիա), կազմելով պետական հողային պաշար կամ Ֆոնդ: Հանրութեան են պատկանում նաև բոլոր ջրերը և երկրի խորքերը իրենց հարստութիւններով: Պետական Ֆոնդի հողերը յանձնուած են տեղական ինքնավարական մարմինների տնօրինութեան (մունիցիպալիզացիա): Այդ մարմինները հողը բաժանուած են աշխատաւորական չափով այն բոլորի մէջ, որոնք ցանկանում են պարապել երկրագործութեամբ անձամբ, ընտանիքով կամ ուրիշ աշխատաւորների ընկերակցութեամբ: Իւրաքանչիւրը իրաւունք ունի ըստանալու այնքան հող, որ նրա եկամուտը բաւարարի իր և իր ընտանիքի կարիքներին: Քանի որ հողը իրյատակութիւններով և գիրքով տարբեր է լինում և որոշ հողաբաժիններ ընկած լինելով երկաթուղիների, քաղաքների և գետերի մէջ անկախ գործ գրած աշխատանքի չափերից յաւելեալ եկամուտներ են տալիս՝ այդպիսի հո-

զարաժինների վրայ սահմանուում է որոշ տուրք,
յօզուտ տեղական հասարակական կարիքների:
Ով զադարում է մշակելու իր հողաբաժինը՝ այդ-
պիսին պարտաւորուում է հողը վերագործնել
ֆոնդին և եթէ նրա կողմից կատարուած են հո-
ղի բարւոքումներ (մելիորիդացիա) նրան տրու-
ւում է դանձարանից բարւոքումների արժէքը:
Այն տեղերում, ուր հողի պակասութիւն չի
պզտցւում, այլ մնում են մեծ տարածութիւններ
անմշակ, այդ տարածութիւնները շահագործե-
լու համար կարող են տրուել անհատներին և
ընկերութիւններին որոշ պայմաններով, և
ժամանակամիջոցում, սակայն հէնց որ հողի
պակասութիւնը կրկին երևան գայ, այդ բաժին-
ները ևս բաժանուում են նորմալ կարգով: Երկրի
ընդհանուր տնտեսական և կուլտուրական պա-
հանջների տեսակէտներով առանձին նշանակա-
թիւն ունեցող մշակոյթների համար ինքնապա-
րութիւնները իրաւունք ունեն ընկերութիւննե-
րին, դպրոցներին և այն հողաբաժիններ տալ
աշխատաւորական նորմայից տարբեր չափերով:

ԱՅՅԻԱՄԵ Է ԲԱԺԱՆՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՐԴԱԿԱՅԵՆ ՈՒԹԻՒՆ

ՄԵԿԱՆԻ ՍՅՆՏԻՍՏՆԵՐԻ ՕՐԳԱՆ 1919 թ.

Երեք անոթ բաժանորդագարը 5 րուբլի

Մի » » 2 րուբլի

Հասցիական անոթ անդ 70 կոպէկ

Հասցեն՝ Александрополь, Копье Независимых Сопия-
Листовъ

ԳԻՆՆ Է 2 ԲՈՒՑ.

«Ազգային գրադարան»



NL0202327

